

ԱՍ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

## Գ Ի Տ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

## ՀԻՆ ՏԱՂԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական հին ձեռագրերից — որպես նվիրական ժառանգություն — մեզ հասել է օրբստօրե աճող մի այնպիսի քանակություն, որը հնարավորություն է ընձեռում մեզ՝ դադարաբար կազմելու այն պատկանելի ամբողջության մասին, որի մի մասնիկն է ինքը՝

Ահա այդ ձեռագրերումն է, որ ի շարս բազմատեսակ, այնքան մեծարժեք զանձեբի, հասել են մեզ նաև մեծ քանակությամբ դեպքերիկ նմուշներ այն տաղերից, որոնք հորինված են միջնադարյան մեր քաղցրաբարբառ տաղերգուների կողմից։

Որպես երկնեբանդ մարգարիտներ այդ տաղերը շտաշտրեն շաղ են տրված մեր հոգնաբեղուն գրիչների ձեռքով բազմաթիվ ձեռագրերի մեջ։ Գրիչներ, որոնք «դառն ու դժար» պայմաններում, «սուղ ու խիստ» ժամանակներում վար չեն դրել իրենց հղեղնյա գրիչները և արապրել են դարեր շարունակ, անորատունջ սիրով, ընդօրինակել են մեկը մյուսից և թողել իրենց հաջորդներին, որ վերջիններիս իրենց գրասեր պապերի թողած անդուգական նվերներն ստանալով, «ողորմի» ասեն նրանց հոգու համար...

Ինչպիսի սոսկալի լուծություն իջած կլի-

ներ մեր անցյալի պատմության վրա, եթե չլինեյին մեր ստեղծագործող ժողովրդի վաստակներն ամփոփող այդ խունացած, սակայն հավերժորեն նոր ձեռագրերը։

Որքան էլ որ խնամքով, զգուշորեն և պատասխանատվությամբ մեծ զգացումով են կատարվել այդ ձեռագրերի ընդօրինակության և պահպանման աշխատանքները, դարձյալ քիչ չեն եղել այնպիսի հանգամանքները, որոնք տեղիք են տվել մի շարք աղավաղումների, փոփոխությունների և հետագայում առաջացրել են (մինչև հիմա չլուծված) մեծ շփոթություններ։

Այդ թերությունները բղխում են դահազան պատճառներից, որոնց վրա անհրաժեշտ ենք համարում կանգ առնել, մատնանշելով որոշ շահույթներ, որ պետք է կատարել առանձին բանաստեղծությունների նկատմամբ։

ա) Ընթրուքյուն. — Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ բոլոր ձեռագրերը (չնչին բացառությամբ) գրված են եղել որոշ մարդկանց հատուկ պատվերներով, պարզ է, որ այնտեղ գետեղվող նյութերը պիտի կամա թե ակամա համապատասխանեն պատվիրատուի՝ դադարաբարբառության պահանջներին։ Այստեղից դժվար չէ պատկերացնել, որ բոլոր հեղի-



նակները կամ միևնույն հեղինակի բոլոր գործերը չէին արժանանա այդ ժողովածուներում տեղ գտնելու բախտին և, հետևապես, պիտի աստիճանաբար անհետանային: Թե ինչպիսի առավելություն է արված

եղել միևնույն հեղինակի տարբեր տաղերին, կարելի է տեսնել հետևյալ աղյուսակից, որը կազմված է մեր Մատենադարանի բերլիոգրաֆիկ աշխատանքների նախնական տվյալների հիման վրա.

№	Տ ա ղ ե ր դ ու		Տ ա ղ Ը		
	Անունը և մականունը	Ժամանակը՝ կյանքի և ստեղծ.	Սկզբի տողը կամ վերնագիրը	Բովանդակութ.	Վարիտնա. քանակը
1	Հովհաննես Երզնկացի	13—14 դ.	«Յամենայն մեղաց ի դատ ասէ դու կացիր . . . . .»	Հոգևորական խրատներ	10
			Տաղ աստվածածնի . . . . .»	Կրոնական	15
2	Հովհաննես Թլուրանցի	14 դ.	«Այս ինչ կրակ էք այրեց» . . . . .»	Միբանարական	2
			«Քիմսէ պէնի պիլմէզ իղի...» . . . . .»	Կրոնական (աստվածածնին նվիրված)	7
			«Ես Յովհաննես նուստ ոգի...» . . . . .»	Կրոնական	17
			«Աստուած անսկիզբ և անսահման» . . . . .»	Բնութ. մասին	1
			«Դու ես դարնանային վարդ ու բուրաստան» . . . . .»	Միբանարական	3
			«Աստուած դրթած և մարդասէր...» . . . . .»	Ճշգրտվ. մասին (կրոնական)	8
3	Մկրտիչ Նաղաշ	15 դ.	«Յանկարծակի մէկ մի տեսայ...» . . . . .»	Միբանարական	1
			«Անձն իմ, արի ուղօթէ դէմ արարողին . . . . .»	Կրոնադպր. խրատներ	8
			«Բլրուն ի վարդն ասաց խիտ անողորմ ես...» . . . . .»	Միբանարական	3
			«Ղարիպին կեանքն է լալի ողբերգական» . . . . .»	Պանդխտության մասին	18

Կարծում ենք, որ այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե որքան մեծ դեր է խաղացել ընտրության վերահիշյալ սխառնված մեր անցյալի ժառանգության ընդօրինակումների և պահպանության գործում: Հակառակ դեպքում՝ ոչ մի կերպ չէր կարելի հաշտվել, ասենք հենց, Հովհ. Թլուրանցու «Քիմսէ պէնի պիլմէզ իղի...» սկզբնատողն ունեցող Մարիամ աստվածածնի մասին թուրքերեն լեզվով (հայատառ) գրած տաղի վարիտաների յոթնապատիկ գերազանցության հետ՝ նույն հեղինակի «Աստված անսկիզբ և անսահման...» սկզբ-

նատողն ունեցող, բնության մասին գրած, սքանչելի տաղի նկատմամբ էլ չենք խոսում «Ես Յովհաննես նուստ ոգի...» տողով սկսվող աստուածային արարչության—կրոնական պատմության վերաբերյալ գրված նույն հեղինակի ամենամեծ ծավալն ունեցող ստեղծագործության մասին, ուր գերազանցությունը յոթի փոխարեն հասնում է տասն և յոթի:

Ինչ վերաբերում է Մկրտիչ Նաղաշի պանդխտության մասին գրած տաղի վարիտաների առատությամբ աչքի ընկնող բացառությանը (18 հատ) դա ինքնըստին-



քյան հասկանալի է դառնում, երբ մենք նկատի ենք առնում այդ տաղի հետևյալ հատկանշական կողմերը:

Առաջին, այդ տաղը ամենամեծ ժողովրդականություն վայելող տաղերից մեկն է եղել յուր արծարծած խնդիրներով և գեղարվեստական ծշակմամբ:

Երկրորդ, այդ տաղը կրոնի ու եկեղեցու շահերի դեմ ուղղված չի եղել այնպես, ինչպես, ասենք, Ֆրիկի «Գանդաա»-ը կամ Հ. Թլիկերանցու այն տաղը, ուր հեղինակն իր սիրունու մասին ասում է.

«Քարոզս ու շարականս՝ և ուսուցան դու  
ևս...»

Այս հանգամանքն օգնում է մեզ (որոշ շափով) բացատրելու, թե ինչու մի շարք հեղինակներից մեկ հասել են միայն մի քանի հատ ու կտոր տաղեր (Մսքին Քերովբե 2 տաղ, Արտամեհապի 2 տաղ և այլն): Այդ տաղերն իրենց քանաստեղծական օրի-

գինալությամբ մեզ թույլ չեն տալիս կարծելու, որ նրանց հեղինակներն այդքան քիչ են ստեղծագործել իսկ թե՛ քանի անուններ են թողված լուսթյան մեջ—դժվար է ասել:

բ) Աղավաղումներ. — Ընդօրինակումների ժամանակ միշտ չէ, որ դործն ընթացել է բարենպաստ պայմաններում: Մի կողմից, ընդօրինակության համար օգտագործվող ձեռագրերի հնանալու պատճառով նրանց դժվար ընթեռնելի դառնալու հանգամանքը, մյուս կողմից՝ որոշ գրիչների անվարժությունը (թե կարդալու և թե գրելու տեսակետից) պայմանավորում էին աղավաղումների այն կատեգորիան, էթե միայն կարելի է այդպես ասել, որն առաջանում էր օրեկտիվորեն, առանց որևէ դիտավորության: Որպես օրինակ կարելի է նշել Հովհ. Թլիկերանցու տաղերի մեջ հետևյալ աղավաղումները:

Ըստ հին և ստույգ վարիանտների (Մատենադարանում գտնվող ձեռագրերի հիման վրա)

Ըստ աղագրված օրինակների (Կ. Կոստանյանի, Մկրյանի և այլոց հրատարակություններում)

«Լոյս երեսացդ է քո փափամ» . . .  
«Քաղաք Խութան ու Չինմաչին» . . .  
«Չիշխեմ դնել դիս պիղծ գործոյ» . . .  
«Է վիզ շողկըսաւ, է այտեր կակաւ» . . .  
«Պազ մի երեսէդ կամէ զնգնկան» . . .

«Լոյս երեսացդ է խիտ փափակ»  
«Քաղաք Խութան ու Չինմաչին»  
«Չիշխեմ նղ է՞ր դիս պիղծ գործոյ»  
«Է վիզ շողկտակ և այտեր կակաւն»  
«Պազ մի երեսէդ կամէ զնգրաւսան»

Օրինակները բաղմաթիվ են: Բավարարվենք այսքանով:

Այդ է պատճառը, որ այսօր ոչ միայն համեմատաբար ավելի հին, այլ և նոր (հետագա շրջանների) տաղերգուների մոտ ստեղծվել են այնպիսի նախադասություններ, որոնցից ոչինչ հասկանալի չի կարելի, առանց հավանական ենթադրությունների և հին վարիանտների օգնությանը դիմելու, ճիշտ այնպես ինչպես վերոհիշյալ օրինակներում «կանանչ այտերը» կամ «փափուկ լույսը»:

Կա նաև աղավաղումների մեկ ուրիշ ավելի վատ տեսակը, երբ դործի է դրվում արդեն դիտավորությունը, եթե մեր տաղեր-

գուները կյանքի և աշխարհի մասին, հակառակ հոգևորականության քարոզների, իրենց ունեցած հստակ պատկերացումներն արտահայտում էին գողտրիկ տաղերով, ապա ինչ-որ մարդիկ սկսում էին զրադիկ այդպիսի տաղերի խեղաթյուրումներով: Օրինակ՝ Ներսէս Մոկացու «Վիճաբանութիւն երկնի և երկրի» տաղը, ուր երկրի և հողի հաղթանակի առաջ խոնարհվում է պարտված երկինքը: Մակայն Մատենադարանի № 7682 ձեռագրում գտնվող վարիանտի համաձայն հակառակն է ստացվում:

«Գեախնն ընդ երկինքն ասաց.  
Մեղայ քեզ, եղբայր իմ, մեղայ,



Եւ քեզ խորաթայ արի,  
Դու ես մեծ քան զիս գովելի...»

Այն ինչ իսկական վարիանտի մեջ հեղինակն տառն է.

«Անա ցածրացաւ երկինքն  
Ու զգլուխ եղիւր զեանի...»

Բերենք ուրիշ օրինակ.

Հովհաննէս Թլկուբանցուն (ամենայն հավանականութեամբ) պատկանող սիրո տաղերից մեկում, ըստ 1556 թվին գրված ձեռագրի՝ տաված է՝ «Բարոզս ու շարականս՝ և ուսումս դու ես» այն ինչ հետագա ժամանակներում արտագրված ձեռագրերում այդ տաղին փոխարինում է.

«Բեզ ինչ պատճառ դնեմ երբ աննամուն  
Ես...»

Իրեն չարգարացնող տաղը.

Աղավաղումներ են ստացվել նաև այն պատճառով, որ գրիչների կամ պատվիրատուների կողմից առանձին ուշադրութուն չի դարձվել տաղերի համար մեծ նշանակություն ունեցող այնպիսի մոմենտների վրա, ինչպիսիք են, ասենք, վերնագրերը՝ առանձին ծանոթութունները և այլն։ Օրինակ, շատ դեպքերում տաղի հեղինակն իր անունը գրում է միայն վերնագրում, իսկ հետագայում, արտագրութունների ժամանակ, վերնագիրը կամ բոլորովին անտես է առնվում կամ սեղմվում, որով և հեղինակի անունը կորչում է։

Այդպիսի տաղերից կարելի է որպես օրինակ հիշատակել.

1) Արիկ Կոստանդի—

«Աղամ նստել դունն դրախտին,  
Լայր և սգայր ողորմողին...»

տողերով սկսվող տաղը.

2) Հովհ. Ծործորեցու — «Յրատք հոգևփորք»-ը;

3) Դր. Աղթամարցու — «Մեր տէրն է բազմեր...» բառերով սկսվող տաղը;

4) Դրիգ. Նարեկացու մեկ մեղեդին և այլն։

Դրանցից առաջինը Միանաարյանը հրատարակել է որպես անհայտ հեղինակի գործ, իսկ Կ. Կոստանյանը առաջ քաշելով «Աղա-

րիա» անունն ստեղծելու համար անհրաժեշտ սկզբնատուները՝ 4-րդ, 8-րդ, 14-րդ, 18-րդ, 30-րդ, 33-րդ, 37-րդ և 53-րդ տողերից, վերագրել է այն Աղարիային։ Սուքչկա, որ այդպես վարվելով՝ միշտ էլ կարելի է խնդրել «լուծված» համարել բոլոր անունի տաղերի նկատմամբ՝ վերագրելով այն ցանկացած հեղինակին։ Այդ տաղը Մատենադարանի № 3596 ձեռագրում (գրված 15—16-րդ դարերում) պարզորեն կրում է Արիկ Կոստանդի անունը հիշատակող վերնագիր։

Երկրորդ տաղի վերնագիրը՝ փոփոխության ենթարկվելով՝ այդ տաղը զրկվում է Հ. Երզնկացու սեփականութունը լինելուց և համարվում է Հ. Թլկուբանցունը։

Երրորդ տաղի սկզբնատուներն են.

«Մեր տէրն է բազմեր ի բարձր աթոռին  
Աջովս յօրինէր է զպատկեր քոյին...»

Այս տաղը՝ չունենալով հեղինակի անվան հիշատակում, մինչև հիմա մնացել է որպես անհայտ հեղինակի գործ։ Մակայն մեր Մատենադարանում գտնվող ձեռագրից մեկում (№ 7707) եղած այդ տաղի մի վարիանտը այդ տաղի բախտը կապում է Դր. Աղթամարցու անվան հետ։

Մեր նշած վարիանտի վերնագիրն է «Տաղ ուրախութեան Աղթամարցոյ», իսկ վերջին տունը ունի հետևյալ տողերը.

«Ձուր լից դու սրտիդ, ով Աղթամարցի,  
Որ ի լարելոյ շուտով խալլսի».

Այն ինչ՝ այդ տաղի տաղգիր վարիանտն իրականութեան ազավաղում է ցույց տալիս նախ՝ վերնագրով՝ «վասն սիրոյ և ուրախութեան» և երկրորդ՝ համապատասխան նախափեղջին տողերով՝

«Ձուր լից տուր սրտիս, որ թեզմ  
անցանի,

Որ ի լափելուն շուտով խալլսի...»

Զմոտանալով նշել, որ ապագրության հանձնված վարիանտն ընդօրինակված է 1617 թվականին արտագրված ձեռագրից, իսկ մեր նշած վարիանտը գտնվում է 1611—1614 թվերին արտագրված ձեռագրում։ Զնայած Պալյանի «Հայ Աշուղներ»-ում



այդ տաղը գետեղված է Աղթամարցու անվան տակ, բայց այդ օրինակն էլ զուրկ է «ով Աղթամարցի» կարևոր նշումից: Այդ նույն պատճառով է, որ Տէվկանցի «Հայերգ»-ում նարեկացու «Սէր յառաւօտէ, Սէր յառաւօտէ...» գողտրիկ մեղեդին վերագրված է ոմն «Մկրտիչ» անվամբ հեղինակի, այն ինչ № 8188 ձեռագրում պարզորեն կրում է «Մեղեդի նարեկացի» վերնագիրը:

Այդպիսի աղավաղումների թվին կարելի է ավելացնել նաև տաղերի կրճատումը՝ ինչ-ինչ պատճառներով: Այս դեպքում երբեմն դուրս են մնում հեղինակի անունը կամ ժամանակի ու տեղի մասին եղած կարևոր տեղեկությունները: Երբեմն էլ անհասկանալի է դառնում տողերի սկզբնառաւերով արտահայտված բառերի միտքը, (որն այնքան դորձածական է մեր տաղերգուներից շատերի համար):

Օրինակ՝ «Վայրի հաւուկ մի բռնած ու բերած դրած ի նեղ զնդան...» տողով սկսվող գեղեցիկ տաղը մինչև հիմա հայտնի է որպես անհայտ հեղինակի գործ: Այդ մասին նույնիսկ մի բանասեր (Տեա՛ Ղևոնդ Վճռիկանյան «Միջնադարեան աղբայրին տաղաչափութիւն», էջ 42) ասում է. այդ և նման տաղերը «այն պատճառաւ անանուն մնացած են, որովհետեւ քերթողն ինքնին կամաւ ուզած չէ իւր անունն յայտնել...»: Սակայն Մատենադարանի ձեռագրերից մեկում (№ 5668/979) այդ տաղն ավելի ընդարձակ է քան տպագրության արժանացած իր վարիանտներից որևէ մեկը և վերջին տողերից մեկում ունի նշված հեղինակի մականունը:

«Եկայք եղբայրք և լացեք զերգոզս  
բանիս,

զԱրտամետացիս...

Ամօթալի երեսաւք շրջի յաշխարհի

Ողորմ այս գերիս,

Քանզի չունենմ ես փնտուր նման

կրամիս...» և այլն:

\* Այդ տաղը լրիվ տես հաջորդ էջերում: Արտամետացու անվամբ մեկ այլ բանաստեղծութիւն տպված է, Պալյանի «Հայ աշուղներ»-ում:

Չնայած, որ այս կարգի աղավաղումների օրինակները շատ են, բայց բավարարվենք միայն նշվածով:

Աղավաղումների թվին է պատկանում նաև գրիչների կողմից զանազան անհրաժեշտ ծանոթությունների անտեսումը: Մի թե տաղերգուներից շատերը իրենց տաղերի մասին չեն թողել կից գրված տողեր, թե երբ են գրել, որտեղ, ինչ առիթով և այլն (խոսքս բոլորի մասին չէ). անշուշտ թողել են, սակայն դրանցից շատերը հետագայում մոռացության են մատնվել: Հետո՝ ընդօրինակումների ժամանակ հաճախ այնպիսի հոշակված անունները, ինչպիսիներից են Հովհ. Պլուզ կամ Հով. Թլկուրանցի և այլն, հենց իրենց շատ ծանոթ լինելու պատճառով, ընդօրինակության մեջ հաճախ զրկվել են մականվան կամ անվան պահպանումից, որի պատճառով այսօր իբրար հետ են շփոթվում մի շարք Հովհաննեսներ, Վարդաններ և այլն:

Էլ չենք խոսում իրենց՝ գրիչների կողմից սխառմաբան վերածված ծանոթություններ գրելու այնքան անհրաժեշտ հանգամանքը անտես առնելու մասին. ճիշտ է կան նաև այդպիսի, սակայն սակավաթիվ, գրիչներ, օրինակ՝

Պղնձէ քաղաքի պատմության մեկ վաբիանալը (տես № 6622 ձեռագիրը) գրչի կողմից ունի հետևյալ կարևոր ծանոթությունը:

«Ով եղբայր, յորժամ ընթեռնուք զպատմութիւնս, յայն ժամ զիմաստուն կաթողիկոսն զՏէր Գրիգորիան յիշեցէք... զի շատ աշխատեցաւ ի հետ սորայ և ԽԳ ողբ յիւր մէն ատեալ ի սայ, թող զայն, որ երկու վանկն և զմէկն ինքն է արարեր») ի բնական ողբերն. զի պակաս էր...»: Ապա այդ հիշատակութիւնը փոխվում է գրչի կողմից տաղի, ուր ի միջի այլոց խոսվում է գըրջության ժամանակի և պայմանների մասին.

«... Ի դառն և ի նեղ ժամանակին,

Որ զօրացեալ է այլազգին,

Քանզի խրոխտայ մեր թշնամին՝

Ըզմեղ կլանել յորովայնին...

\*) Խոսքը Գր. Աղթամարցու մասին է:



Շուն Մուստաֆայն՝ ժառանգ չարին,  
Միրա և լեզուն սատանային,  
Յորմէ կրկին տուգանեցին...» և այլն:

զ) Անվանափոխումներ և բացառություններ. — Օգտվելով տաղերի ձևադիր վիճակում տարածվելու հանգամանքից՝ հեազհետե կլասիկ տաղերգուների թողած ազգացությունը հաջորդ սերնդի մեծ մասամբ անճարակ ներկայացուցիչների մոտ փոխարինվում է բանադողությամբ (ինչպես նրկատված է արդեն) և «խե Յովհաննէս Թլկուբանցին» գրչի մի հարվածով դառնում է «Ազնիւ Միքիդ Նախջիվանցի»:

Բերենք օրինակներ.

Մինչև հիմա հայտնի է, որ թաշունների մասին գրված տաղը պատկանում է ամե Յովհաննէս Եպիսկոպոսի, որովհետև այդ տաղը հենց սկզբի տողերից հայտարարում է.

«Տէր Յովհաննէս հոգով տկար  
Եպիսկոպոս յերկիր օտար,  
Կամիմ գովել զհաւքերն հաւասար  
Ուրախութեան մարդկան համար...»:

(Տես Մկրչյանի հրատարակած ժողովածվում էջ 199—201, կամ Կ. Կոստանյանի՝ «Նոր ժողովածու» Ա. պրակ էջ 42):

Բայց Մատենադարանում գտնվող № 738 ձեռագրում և № 3595 ձեռագրի 69 ա թերթից մինչև 79 բ թերթը կա 89 տնից բաղկացած (4 անգամ մեծ քան վերոհիշյալը) նույն տաղի ավելի ընդարձակ օրինակը, որն սկսվում է այսպես.

«Ես կիրակոս հոգով տկար,  
Եպիսկոպոս յերկիր աւտար,  
Կամեմ գովել զհաւք հաւասար  
Ուրախութիւն մարդկան համար»:

Ապա այսուրեքնական կարգով սկսվում է խոսվել զանազան թաշունների մասին սկսած արծվից, արմավից, արոսից, աղավնուց... և վերջացրած, «քրթակնիկ հաւուկ մի կայր»-ով:

Համեմատությունից պարզվում է, որ Տէր Յովհաննէսի տաղը կիրակոսի տաղի

զանազան տների խառնիխուռն դասավորության մի հատվածն է:

Բազմաթիվ են նման փաստերը, սակայն այդ մասին վերջակետ դնելուց առաջ հիշատակենք ևս մի անուն:

Երվանդ Շահադիզը Մատենադարանին է նվիրել մի ձեռագիր հետևյալ մակագրությամբ. «Այս տաղարանը գտնելով քաղաքիս (մազիստրատի ատենապետ) հանդուցյալ Մկրտիչ Մոսոզյանի գրքերի մէջ... նուիրեցի... Մատենադարանին...»

Ճիշտ է, ինչպես այդ, նույնպես և ուրիշ ձեռագրերում կան «Միքիդ» Մոսոզյանի գրած մի քանի անարժեք ստանավորները, բայց այդ «տաղերգուն» այդքանով չի բավարարվել և ձեռքն ընկած տաղերի մեծ մասի մեջ հեղինակների անվան փոխարեն մտցրել է իր անունը, օրինակ.

«Վասն խաղողի» տաղի  
«Քո անունդ է Տիրատուր  
Եւ իմ անունս՝ Աստուածատուր...»

տողերի փոխարեն դուք կկարդաք՝

«Այ քո անունդ խաղողիկիդ,  
Իմ անունս ազնիւ Միքիդ...»

Կամ «Խե Յովհաննէս Թլկուբանցի» տողի փոխարեն Հ. Թլկուբանցու հայտնի տաղերից մեկի մեջ դուք կկարդաք.

«Ազնիւ Միքիդ Նախջիվանցի...» և այլն:

Եթե որոշ մարդկանց կողմից կատարված այդպիսի չարաշահումները առանձին դժգարություններ չեն ստեղծում՝ աղավաղված տաղերն իրենց հեղինակների անվամբ ճանաչելու, ապա այդպիսի չի կարելի ասել ավելի հին ժամանակներում կատարված աղավաղումների առաջացրած շփոթությունների մասին:

Երբեմն էլ գրիչներն իրենք, չբավարարվելով պրոպագանդիստական թողնելուց ու միևնույն ժամանակ զուրկ լինելով ստանավորով արտահայտվելու ընդունակությունից, դիմում են տաղի



որտա տաղերի վերափոխման, աշխատելով «երկրորդական» անունների փոխարեն զետեղել իրենց անունները:

### Իսկականը

«Աստուածատուք մեծոփեցի  
Յինէն խնդրեաց՝ ես գրեցի,  
Դուք ասացեք սրտով իլի  
Ինձ և նորա Տէր ողորմի:

Թուական Հայոց ինն հարիւր  
Եօթանասուն և երկուք այլ իւր  
Հազարացիք օրինօք թիւը  
Զազգս խանձեն որպէս զհուր»:

Ով գիտե, թե ինչպիսի թյուրիմացությունների տեղիք կտար այդ վերափոխումը, եթե այդ տաղի իսկականին հարադատ ունեւոր շատ օրինակներ պահված չլինեին մեր ձեռագրերում:

Նշելով տաղերի ընդօրինակումների հետ կապված և այլ պատճառներով բացատրվող մի շարք կարևոր հանդամանքներ և նրանց շնորհիվ տաղերի կրած փոփոխություններն

Օրինակ Դր. Աղթամարցու տաղերից մեկի հետևյալ երկու տները գրիչների կողմից վերափոխված են այսպես.

### Վերափոխվածը

«Յոհան երեց Զուգայեցի  
Եւ եմ որդի տէր Մեսրոպի,  
Դուք ասացեք սրտով իլի  
Ինձ և իմ հօրն տէր ողորմի:

Թուական Հայոց տասն հարիւր  
Եօթանասուն. Գ. են այլ ուր  
Պարսիկ աղզն էն օրինօք թիւը  
Զազգս խանձեն որպէս զհուր»:

ու աղավաղումները, կարծում ենք, որ արդեն ուարդ է դառնում՝ մանրակրկիտ ուսումնասիրությամբ և համառ հետևողականությամբ տարվող այն աշխատանքի անհետաձգելի անհրաժեշտությունը, որի շնորհիվ հետզհետե պիտի որոշվեն մեզ միջնադարյան բազմաթիվ տաղերի իսկականին հարադատ օրինակները և հատկացվեն իրենց իսկական հեղինակներին: